

ՍՆՏԵՆՆԵՐ

Աստուած Հրեշտակները ստեղծած ժամանակ՝ տասներկու դասի կամ գունդի բաժնեցի գանձեց, Այս գունդերէն երեքի գլխաւորները՝ Սաղաւանդ (Սաղաւանդ), Քէճեղեղուղ և Քէլիառ (Քէլիար) տեսնելով իրենց բարձրութիւնը ու փառքը՝ հպարտացան, ու Աստուծոյ դէմ ապստամբեցան։ Աստուած բարկացաւ, և գանձեք իրենց գունդերով իւր «երեսէն»—ներկայութենէն թափեց դէպի Սանդարամետը, ի պատիւ իրենց ամբարտաւանութեան։ Առաջին գունդը արդէն սանդարամետը հասած էր, երկրորդը երկրի վրայ, իսկ երրորդը երկնքի կէտը՝ երբ վերջին գունդը գոյաց և ազազակեց «Կեցո՛ Տէր»։ Այս ձայնը երբոր լսեց երկրորդ գունդը երկրի վրայ՝ ձայնակեցեցաւ այսպէս «Տէր, ողորմեա՛, Տէր, ողորմեա՛, Տէր ողորմեա՛»։ Աստուած լսեց ասոնց դղումը, աղաչանքը և թողուց գանձեք այն կէտերուն վրայ, ուր կը գտնուէին։ Այժմ այդ Հրեշտակները, որ զրկուեցան իրենց գեղեցիկ տեսքէն ու լուսէն, կը կոշուին Սառամայ, և կը գտնուին երեք կէտերու վրայ։—Դժոխքի մէջ, երկրի երեսը, և երկրի ու երկնքի մէջ տեղը, Սառամայ կը նշանակէ սա, դա, նա, (անձնական դերանուն)։

Սատանաներ թէև կը հաւատան Աստուծոյ, բայց կը հակառակին անոր բոլոր գործերուն, գլխաւորապէս մարդուն, որ ստեղծուած է անոնց դատարկ տեղը լեցնելու համար։ Այս պատճառով երկրի երեսի վրայ գտնուածները Հետամուտ եւ՝ միշտ մոլորեցնել մարդերը և չար գործել տալ, մտնելով անոնց «խղճի», «հոգիի», «սրտի», «փորի» և «ուղեղի» մէջ, կամ ազդելով ասոնց վրայ, յաճախ երեւնալով մարդուն աչքէ աչք կերպարանքով, հրապուրիչ տեսքով ու լեզուով, մինչև որ մեռնի մարդը։ Գարբիէլ և ուրիշ հոգեաւաններ անոր հոգին «կանանդեն» և կ'ուզեն երկնքը տանել, բայց երկնքէն կախուած հակառակորդները անոնց առաջը ելնելով՝ կ'ուզեն կ'ընեն, ու «մերն է» ըսելով կը յաջողին յափշտակել ու կը տանին այն հոգին Սանդարամետ։ Իսկ Գարբիէլ իր ընկերներով տրտուած ախուր երկնք կը վերադառնան։ Իսկ եթէ մեռնողի հոգին արդար ըլլայ՝ չ'են կրնար յափշտակել, ամօթահար յետ կը դառնան։

Սատանաները թէև չունին, որովհետև թափած են անոնք, երբ Աստուած իւր երեսէն վար ձգեց, բայց Հրեշտակներու պէս կրնան ամէն տեղ պնդել, ու ել և էջ ընել, Հրեշտակներու արագութեամբ, իրենց տեսքը, կերպարանքը յափազանց տղեղ է, սև, խաւարապատ, դուրս ցցուած ու բարակ ալտերով, բթով ու շրթունքներով։ Բարակ ու փոքր են նոյնպէս ձեռքերը, ոտքերը։ Կրունկները դէպի առաջ, և ոտքի ճիւղք ու մատները դէպի ետ դարձած։ Անին նաև բարակ

ու երկայն պոչ, վտիտ կոնակի վրայ ոյրութեամբ, ինչպէս կը տեսնու պատկերներու մէջ, Այս աչանդակութիւնները ստացած են Աստուծոյ անէ՛ծքով: Սատանաները հրեշտակներու պէս աւելի արականի հանգամանք ունին, քան իգականի, թէ և յաճախ կ'նոջ կերպարանքով կը յայտնուին, և այն աւելի պառաւ կ'նոջ: 2' պէտք է շփոթել փէրիները սատանաներու հետ, որովհետեւ առաջիններու ծագումը շատ ուշ եղած է, կրնան կենակցիլ մարդերու հետ, և գաւակներ ունենալ, մինչ սատանաները զուրկ են այդ յատկութիւնէն, ո՛չ ծնունդ ունին և ո՛չ մահ, ո՛չ հիւանդութիւն, և ո՛չ մարմնական աճում, ո՛չ կ'ուտեն, և ո՛չ կը հաշիւեն: Ասոնք հրեշտակներու պէս յաճախ հրաշագործ են:

ԱՐԵՎԱԿ, ԼՈՒՍԻՆ ԵՒ ԱՍՏԳԵՐ

Արեգակը ստեղծուելէն մինչև Ադամի ստեղծումը շատ աղօտ լոյս և տկար ջերմութիւն ունէր: Ասոնք կ'ետրոնացած էին մէկ կէտի վրայ, ինչպէս այժմեան գունդի մէջ, այլ ցրուած ամբողջ տիեզերքի մէջ: Աստուած նկատելով որ արեգակը լուսաւորելու և տաքացնելու մէջ բոլորովին անպէտք է՝ մտածեց մէկ կէտի վրայ ամփոփել սփռուած լոյսն ու ջերմութիւնը, բայց չ'գտնուելով այնպիսի աման մը որ պարփակէր զանոնք և մինչև աշխարհքի վախճանը դիմանալու—չ'վնասուելու ոչ ոք ունենար՝ վերցուց Ադամի մարմնի կաւի մնացորդը, շինեց կճուճ մը և անոր մէջ լեցուց լոյսն ու ջերմութիւնը, դրաւ երկնքի մէջ զայն, բերանը դարձուց դէպի երկիրը, որ այնուհետեւ կը հոսէ երկրի վրայ այդ երկին բարիքները: Մեզմէ երևցողը—արեգակ, այդ կճուճն է, կամ աւելի ճիշդ՝ կճուճի բերանը: Արեգակը իր ցերեկուան ճամբորդութենին յոգնած, և շողած, կերթայ երեկոյին արևմտեան կողմը, ովկիանոսի ջրի մէջ լողանալու—զովութիւն և հանգըստութիւն գտնելու: Իր ընթացքը այնքան արագ է, որ մէկ ժամուան մէջ եօթը աւերակ քաղաք կանցնի: Արեգական մեծութիւնն է «եօթ կալ և կէս»: Այս 7¹/₂, կալը այսպէս կը բացատրուի, ոմանք կը հաստատեն, թէ 7¹/₂, կալի (ցորենի կալ, կալսելու տեղ) չափ է, իսկ ոմանք կ'ըսեն թէ «եօթ կալ ու կէս» կը նշանակէ «եօթ ու կէս» անգամ մեծ մեր երկրէն: Կան հաստատողներ որ լուսինը 7¹/₂, և արեգակը 25¹/₂, կալի (ցորենի կալ) չափ են:

Արեգակը առաւօտուն երբ ծովէն դուրս կ'ելնէ՝ երկրին շատ մօտիկ է, ջերմութիւնը սաստիկ, քանի որ դեռ չ'է ցրուած երկրի վրայ, և սպառնաւոր: Այդ միջոցին երկիրը պիտի վառէր, մոխիր դարձնէր, եթէ անոր դէմը չ'ելներ մեծ թռչուն մը, (թռչունի անունը չ'կրցանք